որդի քոյ և որդիս որդոյ քոյ եթէ գուցէ շարժելով 'ի միտս իւր 'ի նոյն գործ որպէս դույառաջնում մի լինիցի նմայ արձակ ընթանալ 'ի գործս անօրէնութեան եթէ ոչ շնթայիւ Օրինօք կապեցեալ ցանկութիւն սրտի և արբեցութեան նորայ զի նայ կացցէ և մնասցէ արժանի 'ի պատուոյ իւրոյ որպէս արար նմայ Տէր և արարիչն ամենայն արարածոց զի կարգադրելով վարք կենաց մերոյ և սահմանաւ վարելով զարգացուցանելով որդոց Հայոց գոցի 'ի մէջ հայաստանեաց արք իմաստունք ունենալով անխախտելի սահմանս 'ի միջի իւրեանց. յայնժամ կարի ծնանիլ 'ի մէնջ Օր ըստ օրէ արք Շնորհալիք և ազատք զի գիտասցեն բարին և կամ չար զգոյշանալոյ վասն ազգին և աշխարհին իւրեանց (եթէ ոչ առաւելագոյն քան դրացիս իւրեանց նա ևս ոչ պակասաւոր.) և ճանաչելով այլ ազգիք ազատութիւն և կարգադրութիւն մեր, խցեն բերանս իւրեանց 'ի ծաղրաբանութենէ վասն մեր և մի գտանիցեն ճանապարհս ուղիղս մուծանել նենգաւոր և վրդովիչք անձինք իւրեանց ըստ նմանութեան գայլոյ արաբացւոյ 'ի մէջ անմեղ խաշանց և գառանց Հայոց, որպէս 'ի ժամանակս անցեալ, և այժմոյս որ կարի ասել իմ թէ առաւելագոյն եղև վնասն հայաստանեաց, 'ի բերմանէ ուրացողաց յազգէն Հայոց 'ի աւանդութենէ Հայաստանեաց և մտանողաց 'ի աւան-